

## HISTORY

# Օտարների հաշվետվություն-հուշագրությունները որպես Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրման արժեքավոր աղբյուրներ

Բ. Գ. Թ. Նաիրա Գասպարյան, պ. Գ. Թ. Արտավազ Դարբինյան

Երևանի պետական համալսարան  
Էլ. փոստ: @ gasparyannaira59@gmail.com

Paper received 22.07.19; Revised 04.08.19; Accepted for publication 09.08.19.

<https://doi.org/10.31174/SEND-HS2019-205VII34-11>

Հոդվածում արծարծվում են հայության լեզվամշակույթին ու հիմնախնդիրներին վերաբերող արդիական հարցեր: Բրիտանական կառավարության պահանջով ստեղծված հաշվետվություն-հուշագրությունները քննության են առնված որպես Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության արժեքավոր սկզբնաղբյուրներ: Ակնկալվում էր հանձնարարությունն իրականացնող հեղինակներից ստանալ Հայաստանին ու հային վերաբերող հավաստի ու անկողմնակալ մանրամասներ՝ առանց խեղաթյուրելու առկա փաստերը: Օտար միսիոներների խոսքի տեքստաբանական վերլուծությունն իրականացվում է լեզվաճանաչողական մեկնակետից՝ արտալեզվական հենքի յուրահատկությունների հաշվառմամբ: Կիրառված է օրինակների ընտրողաբար առանձնացման մեթոդը:

**Բանալի բառեր**՝ հուշագրություն-հաշվետվություն, սկզբնաղբյուր, հայ, թուրքական ջարդեր, ցեղասպանություն:

**Ներածություն.** Ուղեգրություն-հուշագրությունների գրական ժանրը ծաղկում ապրեց շնորհիվ 1830-1916 թթ. բրիտանացի միսիոներների՝ հայկական և բալկանյան խնդիրներին առնչվող հետազոտությունների: Բրիտանական կառավարությանը ներկայացվելուն զուգահեռ այդ հաշվետվությունները միտում ունեին առաջադեմ մարդկությանը իրազեկել թուրքական կառավարության ձեռնարկմամբ և վերահսկմամբ հային և Հայաստանին թուրքերի և քրդերի կողմից սպառնացող վտանգի մասին: Օտարագրի դիվանագետները, քաղաքագետներն ու ճանապարհորդ-միսիոներները փորձում էին Հայոց Մեծ եղեռնի՝ նախօրեին Բրիտանիայի կառավարությանն ու եվրոպական հանրությանը համեմատաբար հստակ ներկայացնել հայ ինքնությանը, արժեհամակարգին, կենցաղին, մշակույթին, կրոնին, պատմությանը վերաբերող հարցերը: Հուշագրություններից շատերը, ներառյալ Ֆրեդերիկ Գրինի<sup>2</sup> և Բաքսթընների<sup>3</sup> հաշվետվությունները, ասեղանգամ են վերահաս ցեղասպանության հասունացած նախադրյալների մասին՝ ընդգծելով դրա անխուսափելիությունը եվրոպական գերտերությունների լուռ անտարբերության, հետևաբար և հանցավոր թողությունների պարագայում:

**Հոդվածի նպատակը և մեթոդները.** Երևան հանել և կայուն պատմական հիմքի վրա կատարված ուսումնասիրության շրջանակներում՝ լեզվաճանաչողական, լեզվամշակութային վերլուծության, համադրման, դիպուկ օրինակների ճշգրիտ ընտրության, պատմական իրողությունների գիտական վերլուծության մեթոդների կիրառմամբ կարևորել հուշագրությունների անգնահատելի արժեքը հայոց խնդիրների լուսաբանման հարցում

Հայոց մեծ եղեռնի նախաշեմին:

**Ուսումնասիրված նյութերի և հետազոտության արդյունքների քննություն.** XIX դարի վերջում և XX դարի սկզբներին հայոց ողբերգության ուսումնասիրության առումով, ամենաէական հուշագրություն-հաշվետվություններից են Ֆ. Դ. Գրինի «*Armenian Massacres and Turkish Tyranny*» ԱՄՆ-ում տպագրված գործը [1] և 1914թ. Լոնդոնում լույս տեսած Նոել և Հարոլդ Բաքսթընների «*Travel and Politics in Armenia*» գիրքը [2]: Ամերիկահայատակ միսիոներ Ֆրեդերիկ Գրինի հուշագրության լեզվական միավորների քննությունը բացահայտում է համիդյան ռեժիմի՝ հայկական ջարդերի ու մոլազար մուսուլմանի վարքագծի զգալի մանրամասներ: Լեզվաճանաչողական լուրջ արժեք է ներկայացնում թուրքի աղոթքն առ աստված, որտեղ բարեպաշտ հավատացյալը դիմելով Ալլահին, ակնկալում է Ալլահի ողորմածությունն ու կարեկցանքը բնաջնջի Ալլահի և իսլամի անհավատ թշնամիներին՝ քրիստոնյա հայերին, որբացնի նրանց երեխաներին, պղծի ու ոչնչացնի նրանց տներն ու սրբավայրերը, որ անհավատներին, նրանց ընտանիքներին, կանանց, զավակներին, հարազատներին կործանման տանի, նրանց ունեցվածքը հարստությունները, հողերն ու ու ցեղն ամբողջովին հալալ անի մուսուլմաններին [1, էջ 433-434]:

Աղոթքի խոսքի պահանջատիրական ձևը՝ արտահայտված հրամայական եղանակի *destroy, defile, make, cause* բայաձևերի կիրառմամբ, սաստկացնում է խոսքի անողորմության աստիճանը: Աղոթքի նման ձևը խորթ է հային, ում Գրինն ընկալում է որպես *ազնվական*, ում մշակույթի մեջ բացակայում է բարբարոս եղանակով հարցերի լուծումը, ով ստեղծարար աշխատանքով

հարստացնում է մարդկության պատմությունը:

*“I seek refuge with Allah from Satan, the accursed. In the name of Allah the Compassionate, the Merciful! O Lord of all Creatures! O Allah! Destroy the infidels and polytheists, thine enemies, the enemies of the religion! O Allah ! Make their children orphans, and defile their abodes! Cause their feet to slip; them and their families, their households and their women, their children and their relations by marriage, their brothers and their friends, their possessions and their race, their wealth and their lands, as booty to the Moslems, O Lord of all Creatures!”*[1, էջ 434]

Նշված ճանաչողական տարրերը բացահայտում են, որ աղոթողն Ալլահին շնորհակալ չէ իրեն տրվածի համար: Ավելին, նա ոչինչ չի խնդրում Ալլահից, այլ պահանջ է ներկայացնում Ամենակարող Տիրոջը ակնկալելով, որ Ալլահը կբավարարի իր ցանկությունները՝ արյունով ձեռք բերվածը *հալալ կանի* հավատացյալ մուսուլմանին: Գրինը սարսափահար նկատում է, որ իսլամին անվերապահորեն նվիրված սուլթանի երկրում նշված աղոթքը պաշտոնական տարածում և գործածություն ունի: Միայն Կահիրեի Azhar համալսարանում երկրի տարբեր մասերից հավաքված տաս հազար մուսուլման ուսանող ամեն օր միևնույն ժամին հնչեցնում էին այդ աղոթքը:

Առաջին հայացքից անմեղ թվացող prayer – աղոթք և student – ուսանող գոյականները, հայտնվելով բացասական լարված բեռնվածություն ունեցող համատեքստում, երևան են հանում սարսափելի ճշմարտությունը՝ հիվանդագին հայատյացությունը:

1914թ. Մեծ Բրիտանիայից Արևմտյան ու Արևելյան Հայաստան ժամանած, ապա Պարսկաստանի հայաբնակ տարածքներ այցելած միսիոներ Բաքսթընները իրենց ճանապարհորդության ընթացքում բրիտանական կառավարության պահանջով, նպատակ ունեին գտնել կարևորագույն հիմնահարցի պատասխանը՝ արդյոք հայը ուներ այն հատկանիշները, որոնք կնպաստեին հային քաղաքակրթելու գործին: Նշենք, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը 1884 թ. Աֆրիկյան երկրների գծով Բեռլինի կոնֆերանսից հետո *քաղաքակրթել* ասելով հասկանում էր *գաղութացնել* տարածելով իր առաջադեմ մշակույթն ու լեզուն: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ էր պարզել, թե որքանով էր հնարավոր Հայաստանը ծառայեցնել բրիտանական շահին [3, էջ 26-27]:

Իրենց հաշվետվության մեջ անդրադառնալով 1894-1896թ. համադյան հայկական ջարդերին՝ Բաքսթըններն արտահայտում են փաստերով հաստատված սեփական համոզմունքն այն մասին, որ բոլոր ժամանակներում հայերի ջարդերը եղել են մանրակրկիտ պլանավորված, դրանց հեղինակն ու կազմակերպիչը միշտ եղել է միայն թուրքական կառավարությունը, թուրքական կառավարության վերահսկողությունից դուրս ոչ մի այլ կոտորած

կազմակերպվել չէր կարող, անկախ այն բանից դրանք ունեին կրոնական, սոցիալական թե էթնիկ-ազգային ուղղվածություն: Բաքսթընների հաշվետվության երկրորդ մասում վերոբերյալի հետ կապված անդրադարձ է կատարվում հայտնի հայ գրող Բաքսթոն որդու՝ Արամ Բաքսթոն հեղինակած նյութին:

Արամ Բաքսթին, ով այդ շրջանում բնակվել է Լոնդոնում, անդրադառնում է 1895 թ., դեպքերին, երբ փոքրասիական ողջ տարածաշրջանում իրագործվում էին հայերի մասսայական կոտորածներ: Զեյթունցիներին հաջողվում է ամիսներ շարունակ մերձափնյա տարածքներում կասեցնել 60000 զինվորներից բաղկացած զորքը, 600 հոգանոց զորամիավորում են գերի վերցնում՝ ներառյալ ողջ սպայական անձնակազմը: Արամ Բաքսթին գրում է, որ 1896թ. Կոստանդնուպոլսի բրիտանական հյուպատոսի միջնորդությամբ խաղաղություն ապահովելու քայլեր են ձեռնարկվում՝ հանվում է պաշարումը, նոր զորքեր այլևս մուտք չեն գործում քաղաք, սակայն այլ նենգամիտ քայլ է կատարվում: Թուրք հրոսակները, օգտվելով այն հանգամանքից, որ քաղաքում կռվելու ունակ հայ տղամարդիկ քաղաքի պաշտպանությունն իրականացնում էին քաղաքի մատուցներում, փորձում են նենգադավորեն կրակի մատնել քաղաքը: Հայ կանանց աչալրջության շնորհիվ, ինչևէ, աղետալի դեպքերը կանխվում են: Հարձակում գործելով թուրքերի վրա՝ հայուհիները մեկ անգամ ևս ապացուցում են, որ կենաց ու մահու կռվի ելած թե՛ հայ տղամարդը և թե՛ հայ կինը կարողանում են ցուցաբերել կազմակերպվածություն, հաստատականություն, քաջություն և անսպասելի իրադրության մեջ ճիշտ և արագ կողմնորոշվելու գովելի ունակություն [2, էջ 215-217]:

Բաքսթընները՝ հաշվետվության կազմում ներառելով Արամ Բաքսթոն հեղինակությամբ ներկայացված դրվագներ հայոց պատմությունից և հայ ինքնության ու արժեհամակարգին վերաբերող քննարկումներ, ամենայն հավանականությամբ, նպատակ են հետապնդել հավաստիացնելու բրիտանական կառավարությանը և եվրոպական հասարակությանը, որ իրենց դիտարկումները հիմնվում են անաչառ փաստերի և իրողությունների վրա: Նրանց արձանագրած հրեշավոր փաստերից էր նաև այն, որ, երբ Կոստանդնուպոլսում դեսպանատների աչքի առջև 1894-1896 թթ. կազմակերպվել են հայերի կոտորածներ, անզիացիները փորձել են «գթասրտաբար» ռեֆորմների առաջարկ անել, իսկ Գերմանիայի կայսրը թուրքական սուլթանին հավաստիացրել է իր անխախտ բարեկամությունը: Բաքսթընները ցավով են նկատում, որ եվրոպամետ երիտթուրքերը 1908թ. իշխանության գրավումից հետո կարճ ժամանակ անց ձեռնամուխ են լինում հայկական հարցի յուրովի

«լուծմանը»: Ըստ Բաքսթընների՝ հայերը քաջ գիտակցում են, որ կրթված երիտթուրքերն ավելի վտանգավոր են ու ավելի հեռուն են գնալու քան սուլթան Աբդուլ Համիդը: Երիտթուրքերի կառավարության հոգածությամբ 1909թ. կազմակերպված Ադանայի ջարդերից հետո հայերի վիճակն էլ ավելի անտանելի է դառնում:

Բաքսթընների հաշվետվության տեքստն հետաքրքիր է այն առումով, որ որոշակի ազդակների ներքո պաշտոնական խոսքը ձևափոխվում է հուզականի: Դառնալով թուրքի ու քրդի ոճրագործությունների ակնատեսը և անգոր լինելով փոխել իրավիճակը՝ Բաքսթըններն անթաքույց գայրույթով ու անհանդուրժողականությամբ են լցվում թուրքական հայատյաց կառավարության նկատմամբ: Օրինակ, հայերի նկատմամբ թուրքական կառավարության նենգադավ՝ քայլերն ու հրեշավոր վերաբերմունքը, զանազան դեպքերի նկարագրությունը, որոնք հաշվետվության շրջանակում փաստացի քննարկման են արժանանում անզլիացի ազնվական եղբայրների կողմից, ստիպում է վերջիններիս եզրահանգել, որ արյունարբու ու բարբարոս թուրքից բարեփոխումներ ակնկալելը անմտություն է, որ արժանապատիվ ապրելու համար նույնիսկ թուրքն ու քուրդն են ստիպված հեռանալ երկրից, իսկ հայը կանգնած է ոչնչացման եզրին: Նշվում է, որ թուրքի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանն իր չափերով զգալիորեն գերազանցում է Արևելյան Հայաստանին, նաև, որ թուրքական իշխանությունների որդեգրած հայասպան ու հայահալած քաղաքականության արդյունքում հայն իր պապենական հողում վերածվել է փոքրամասնության [2, էջ 131]:

Հետաքրքրական է, որ Բաքսթընների կարծիքով հանուն ընտանիքի ու հայրենիքի մեռնելու ունակություն ցուցաբերող հային գործելու հնարավորություն չի տրվում, մինչդեռ հայը տվյալ տարածաշրջանի միակ կառուցողական ուժն է: Անզլիացի ճանապարհորդ-միսիոներ Բաքսթըններն հավատացած են, որ զենք ունենալու դեպքում խեղճ ու ընչազուրկ հայը ունակ է ոչ միայն պաշտպանել իր անվտանգությունը, այլև՝ ապահովել ողջ տարածաշրջանի խաղաղությունը: Բաքսթըններին հիացմունք է պատճառում այն փաստը, որ նույնիսկ նման օրհասական պայմաններում հայ ծնողը փորձում է նյութական արժեքներ ու բարիքներ ստեղծելով, իր զավակին կրթության տալ ու դրանով գոնե մի քիչ թեթևացնել զավակի դժվար կյանքը, սակայն Բաքսթընները նկատում են նաև մի ցավալի ճշմարտություն՝ հայի զավակները երբեք այնքան չեն մեծանում, որ վայելեն ծնողի քրտնաջան աշխատանքի պտուղները: Հայը չի կարող ապավինել ապագային, բայց, այնուամենայնիվ գոյատևում է, երեխա է դաստիարակում, ի վիճակի է հասնել բավականաչափ անձնական երջանկության, նույնիսկ ձգտում է

մշակութային և մտավոր առաջխաղացման: Բաքսթըններն համոզված են, որ հային ոչնչացումից փրկում է նրա աննկուն լավատեսությունը:

Բաքսթընների ծավալած հայանպաստ գործունեությունը և գործադրած հսկայական ջանքերն ուղղված էին հայի մասին եվրոպական հասարակական կարծիք ստեղծելուն: Նրանք, ըստ իրենց տեսածի ու լսածի, իբրև հայկական ջարդերի տարածք հիշատակում են *Հայաստան* տեղանունը և ոչ թե *Օսմանյան կայսրություն* տեղանունը, ինչպես այսօր վարվում են ումանք: Բաքսթընները հստակ գրում են, որ հայերի ջարդերը տեղի են ունեցել հայերի հայրենքում, որի արդյունքում հայը հայրենագրկվել է:

Հասկանալով, որ նույնիսկ ամենամեծ ցանկության դեպքում անկարող են հայերի կյանքում որևէ բան փոխել Բաքսթըններն անկարողությունից նզովում են թուրքին: Տեսածն ու լսածը նրանց վերջնականապես համոզում են, որ թուրքը բարեփոխումների ունակ չէ, և կոչ են անում աշխարհին համաշխարհային մշակույթի գանձարանն հարստացնող հային փրկել թուրքից, քանի որ հայերի «*տառապանքը չափազանց մեծ է տանելի լինելու համար, իսկ նրանց առնչվող որոշումներ կայացնելը Եվրոպյան անընդհատ ձգձգում է մինչև հարմար պահը գա: Դա վերաբերում է թե՛ մշակույթին և թե՛ տնտեսությանը, բայց ամենից առավել դա անձնական ու բարոյական անապահովության խնդիրն է: Մյսայիսի ժողովուրդը, ոչ սովորական, սակայն բարձր օժտվածությամբ, արհեստակներ են ենթարկվում է մի իրավահամակարգի, որը հարմար չէ նույնիսկ վայրենիներին կառավարելու համար: Քիփլիցի տերմինով ասած՝ թուրքերը թեր-գարգացածների ցեղ են, այնպիսի մի տեսակ, որի վերացումը չի էլ զգացվի աշխարհում, քանի դեռ նրանք նույնիսկ իրենց սևագործ աշխատանքով էլ նպաստ չեն բերում աշխարհին: Քաղաքակիրթ ազգերի գոյությունը կարևոր է թե՛ իրենց և թե՛ ուրիշ ազգերի համար: Բայց կա նաև երրորդ դասը՝ քիչ են այն ազգերը, որոնք իրենց նպաստն են բերում արվեստներին ու մշակույթին, այս ազգերին աշխարհը կորցնելու իրավունք չունի: Այն, որ հենց այս դասին է պատկանում հայ ազգը, աշխարհում շատերին հասու չէ»[3, էջ 160-161]:*

Բաքսթըններն համամիտ են բրիտանացիների և թուրքերի կողմից շրջանառվող այն կարծիքին, որ բնաջնջման եզրին հայտնված, այլևս կորցնելու ոչինչ չունեցող հայը կարող է դիմել ծայրահեղ քայլերի և նույնիսկ անգեղ հայը սկսում է ակնհայտ վտանգ ներկայացնել իրեն այդ վիճակի մեջ դրած բնաջնջողի համար:

Անդրադառնալով ռուսական գործունին՝ Բաքսթընները գտնում են, որ լեհերի համար անխիղճ ու անմարդկային Ռուսաստանը, հայերի համար, համեմատած արյունարբու Թուրքիայի հետ՝ *Աստվածատուր* է՝ տեսակետ, որն հայ

իրականության մեջ մեկնաբանվում է իբրև ոչ ճիշտ: Հնարավոր է, որ Բաքսթընների ստիպում է այսպես մտածել այն հանգամանքը, որ հայերը Ռուսաստանի կողմից գոնե կրոնական հետապնդումների չեն ենթարկվի, կյանքի հետ անհամատեղելի վիճակներում չեն հայտնվի:

Հրեական ծագմամբ բրիտանացի միսիոներները հստակ ու խոսուն փաստերով ապացուցում են, որ դաժան ճնշումների ենթարկելով քրիստոնյաներին, թուրքը փորձել է բնաջնջել միայն հայերին՝ իրենց էթնիկ պատկանելության պատճառով: Նկատենք, որ ցեղասպանությունը թուրքական իրականության մեջ ազգային հարցի լուծման լավագույն տարբերակն է, որից Սուլթան Մեջիդը ժամանակին փորձել էր օգտվել քրդական հարցը լուծելիս:

**Ամփոփելով** քննության արդյունքները՝ կարելի է ասել, որ Գրինի կողմից նկարագրվածը համապատասխանում է ամերիկացի հայտնի ցեղասպանագետ Գրեգորի Սթենթոնի սահմանած ցեղասպանության առաջին չորս փուլերին<sup>5</sup>, մինչդեռ Գ. Սթենթոնի ցեղասպանության փուլերի սանդղակը [4], կիրառելով Բաքսթընների նյութի նկատմամբ և լեզվականը համադրելով արտալեզվականի հետ, պարզում ենք, որ դեպքերի ակնհայտ Բաքսթընների հաշվետվությունը ներկայացնում է ցեղասպանությունների նախորդող, ցեղասպանության ռումբեյան տեսության շրջանակներում [5] դիտարկվող Գրեգորի Սթենթոնի կողմից ձևակերպված բոլոր 8 փուլերի լիարժեք նկարագիրը<sup>6</sup>: Բուն Հայոց ցեղասպանության և դրան անմիջապես հաջորդող ժխտման փուլերը սկսվում են 1915 թ-ից:

Ժխտման փուլի առանձնահատկությունները սպառիչ լուսաբանման է արժանացրել Թաներ Ակչամը: 2016 թվին **«Armenian Weekly»** շաբաթաթերթին տված հարցազրույցի ժամանակ, մասնավորապես, նա ասում է, որ ժխտումը՝ լինելով պատմական ճշմարտություն, ավելի շուտ ընտրություն է, քան տրամաբանական փաստարկ, այսինքն, որքան էլ որ համոզիչ ուսումնասիրություններ ու փաստաթղթեր հրապարակվեն ճշմարտության վերաբերյալ, ժխտող կողմը միշտ էլ գտնելու է որևէ համապատասխան հրապարակում, որը կներկայացնի իբրև ցեղասպանության ժխտման հիմք: Նրան մտահոգում է այն հարցը, որ պաշտոնական Թուրքիան պետք է հայցի հայերի ներողամտությունը 1915 թվի Հայոց ցեղասպանության կապակցությամբ [6]:

Բաքսթընների հաշվետվությունը՝ վկայելով վերահաս ցեղասպանության վտանգը, ընդգծում է նաև գերտերությունների կողմից ցեղասպանությունը չկանխարգելելու փաստը: Այսօր առաջադեմ գործիչները ջանքեր են գործադրում, որպեսզի պաշտոնական աստիճանները երևույթը դիտարկեն իբրև մարդկության նկատմամբ հանցագործություն:

Քաղաքագետ Դեբորա Մայերսենը Բաքսթընների հաշվետվության հիման վրա կատարած վերլուծությունների ընթացքում գուգահեռներ է անցկացնում Հայաստանում և Ռուսադայում իրագործված ցեղասպանությունների միջև՝ նշելով, որ երկու դեպքում էլ նախադրյալներն ակնհայտ էին և ցեղասպանությունները՝ կանխատեսելի [7]: Մայերսենն համոզված է, որ Բաքսթընների գիրքը թույլ է տալիս կատարել շրջադարձային նշանակություն ունեցող հետազոտություն՝ ուսումնասիրել վերահաս ցեղասպանությունը չկանխարգելելը որպես հանցագործություն:

**Եզրակացություն.** Նշված ժամանակահատվածում ստեղծված վերոնշյալ հուշագրություն-հաշվետվությունների նպատակն էր համաշխարհային հանրության ուշադրությունն ուղղորդել դեպի Հայաստան, որը մերթ դանդաղ, մերթ մեծ արագությամբ մաքրվում էր հայ էթնիկ բնակչությունից. երևույթ, որն այսօր, քաղաքակիրթ աշխարհում, թուրքերը կոչում են **դենոցրաֆիկ ինժեներիա** [8]: Ըստ էության, նշված մեղմատությամբ քողարկվում է պետության պատվերով, հոգածությամբ և վերահսկողությամբ իրագործված բուն ցեղասպանության երևույթը, որը ոչ թե ուղղակիորեն առնչվում էր Առաջին աշխարհամարտին, այլ պարբերական բնույթ էր կրում և իր տրամաբանությամբ միտված էր մի ամբողջ ազգի նպատակային ոչնչացման: (Խնդրին մանրամասն անդրադարձ է կատարվել Է. Դանիելյանի կողմից [9]):

Արտալեզվական հիմքի ուսումնասիրությունը լեզվական միավորների քննությանը գուգահեռ բերում է այն համոզման, որ

- Հայոց ցեղասպանությունը պարբերական բնույթ ուներ և սկսվել էր շատ ավելի վաղ, որի մասին վկայում են Ֆ. Գրինի դիտարկումները իր **«Armenian Massacres and Turkish Tyranny»** հուշագրության մեջ.
- Բրիտանական կառավարությանը 1914թ. ներկայացրած **«Travel and politics in Armenia»** վերնագրով Բաքսթընների հաշվետվությունը անհրաժեշտ է դիտարկել իբրև Հայոց ցեղասպանությանը նախորդող շրջանի տրամաբանական զարգացումներն ու հասունացող նախադրյալները հաստատող հավաստի աղբյուր, ըստ որի 1915թ. Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած աղետալի դեպքերը կարելի էր կանխատեսել.
- Բաքստոնների հուշագրությունը անգնահատելի աղբյուր է նաև եվրոպական գերտերությունների հստակ դիրքորոշումը և վերահաս ցեղասպանությունից հայ ժողովրդին պաշտոնական մակարդակով չսատարելը հաստատելու, գերտերությունների կողմից հայոց ցեղասպանության կանխարգելիչ լծակները պրակտիկորեն անտեսելու և ցեղասպանության

փաստի նկատմամբ անտարբեր պահվածքը՝ որպես հանցավոր որակելու առումով: Քննությունից հետևում է, որ Հայաստանին ու հայոց խնդիրներին առնչվող Բաքսթընների

հաշվետվություն-հուշագրությունը պարունակում է ոչ միայն հարուստ և ուշագրավ լեզվական նյութ, այլև օգնում է բացահայտել կարևոր պատմական ճշմարտություններ Հայոց ցեղասպանության մասին:

**ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ա) ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ**

- Greene Frederick (1896) *Armenian Massacres and Turkish Tyranny*. Philadelphia & Chicago, Inter. Pub. Co. //Available at: <<https://archive.org/details/armenianmassacre00greeiala/page/n6>>. [Accessed October 2018].
- Buxton N. and H. Buxton (1914) *Travel And Politics in Armenia*, London: Smith Elder &CO. Waterloo Place, 14. //Available at: <<https://archive.org/details/travelpoliticsin00noel/page/n8>>. [Accessed October 2018].

**բ) ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

- Գասպարյան Ն. (2017) *Հայն ու Հայաստանը օտարների այքերով*, Երևան, ԵՊՀ հրատ. Available at: <[http://publishing.yu.am/files/HaynuHayastany\\_otarneri\\_ach\\_qerov.pdf](http://publishing.yu.am/files/HaynuHayastany_otarneri_ach_qerov.pdf)>. [Accessed June 2019].
- Stanton G. President, Genocide Watch. *The Ten Stages of Genocide*. Available at: <[www.genocide-watch.org/images/8StagesBriefingpaper.pdf](http://www.genocide-watch.org/images/8StagesBriefingpaper.pdf)>. [Accessed May 2018].
- Rummel R. (1997) *Statistics of Democide. Charlottesville*. // Available at: <<https://www.hawaii.edu/powerkills/GENOCIDE.HTM>>. [Accessed March 2016].
- Akçam T. (2016) *The Authenticity of the Naim Efendi Memoirs and Talat Pasha Telegrams*. Available at: <<http://asbarez.com/155718/akcam-the-authenticity-of-the-naim-efendi-memoirs-and-talat-pasha-telegrams/>>. [Accessed October 2017].
- Mayersen D. (2014). *On the Path to Genocide: Armenia and Rwanda Reexamined*, N.Y., Berghahn books.
- Şeker N. (2013) *Forced Population Movements in the Ottoman Empire and the Early Turkish Republic: An Attempt at Reassessment through Demographic Engineering* // EJTSS, 16. Available at: <<https://ejts.revues.org/439>>. [Accessed March 2018].
- Դանիելյան Է. (1992) *Հայ ժողովրդի ցեղասպանությունը 1894-1922թթ., Պատճառները, իրագործման փուլերը, թուրք պետականության պատասխանատվությունը* // Միտք – գիտատեսական հավելված
- Gasparyan N., Zohrabyan Ed. (2017) *Linguocognitive Approach To Teaching And Interpretation of Armenian Genocide Issues*. // Foreign Languages in Higher Education, 2 (23), pp.213-225, Yerevan: YSU Press. // Available at: <<http://ysu.am/files/9-1544603494-.pdf>> [Accessed May 2019].
- Poghosyan V. (2014) *The Echoes of the Armenian Massacres of Cilicia in "The Times"*. // Armenological Issues, Bulletin 1, pp.159-164, Yerevan: YSU Press.
- Astvatsaturian Turcotte Anna, (2012) *Nowhere: A Story of Exile* Lexington, MA, USA, Publ. Tatoul Sonentz-Papazian.

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. *Հայոց Մեծ եղեռն* եզրույթը լայնորեն կիրառվում է նշելու համար 1915թ. թուրքերի կողմից հայերի նկատմամբ իրականացված ողբերգական ցեղասպանությունը՝ հայերի բնօրրան Հայաստանում, բայց, այնուամենայնիվ, կցանկանալինք այս առումով պարզաբանում մտցնել: *Մեծ եղեռն* եզրույթը իմաստային առումով ավելի մոտ է *ջարդեր* եզրույթին և թարգմանաբար դրա փոխարեն անգլերենում գործածվում է համարժեք *massacres* եզրույթը, մինչդեռ, մեր կարծիքով, դեպքերի ճիշտ նկարագրմանը համապատասխանում են անգլերեն *genocide* (ցեղասպանություն), *democide* (ժողովրդասպանություն, երբ դեպքերը կազմակերպված են պետական մակարդակով) եզրույթները [10, էջ 213-225]:

2. Պատվելի Ֆրեդերիկ Դեյվիզ Գրինը Թուրքիայում առաքելություն իրականացնող ամերիկացիների գավակ էր, ով ծնվել էր Թուրքիայում 1863 թ. մարտի 13-ին և իր ծնողների նման նույնպես կատարում էր միսիոներական աշխատանք: Գրինը եղել է Սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի կողմից հայերի սահմոնկեցուցիչ ջարդերի ակնաստեսը, ով մազապուրծ փախել է ԱՄՆ և այնտեղ հրատարակել իր հիշողությունները:

3. Ինչ վերաբերում է Բաքսթըն եղբայրներին՝ բրիտանական պառլամենտի անդամ, լորդ Հարոլդ Բաքսթընին և Բակկանյան հիմնադրամի տնօրեն, հոգևորական Նոել Բաքսթընին, նշենք, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը նրանց էր վստահել

Թուրքիայի և Ռուսաստանի վերահսկողության ներքո գտնվող Հայաստանում, նաև Պարսկաստանի հայաբնակ շրջաններում իր լեզվական, մշակութային, հոգեկերտվածքի ու կրոնական առանձնահատկությունները պահպանած հայ ինքնության մանրակրկիտ ուսումնասիրությունը: Եղբայրներն առաքելություն ունեին պարզելու, թե որքանով էր հնարավոր քաղաքակրթել, այ կերպ ասած՝ անգլիական շահին ծառայեցնել հային: Բաքսթընների ուսումնասիրությանը հավաստիություն են հաղորդում նաև ականատեսների վկայությունները:

4. Բուն ցեղասպանությանը նախորդող շրջանում թուրքական կառավարության նենգադավ ձեռնարկումների մասին արձանագրել է նաև բրիտանական The Times լրագիրը, որին անդրադարձ է կատարել Վ. Պողոսյանը [11]: (Հայերի հասցեները ճշտվել են նախապես, բանտերից ազատ են արձակվել հանցագործները, ում խոստացել էին «մատուցած ծառայությունների դիմաց» լիովին վարձատրել հայերի ունեցվածքով:) Նույն ձեռագրին ենք հանդիպում նաև 1988-1990թթ. Սումգաիթում, Կիրովաբադում, Բաքվում հայկական ջարդերի ժամանակ, որոնք կազմակերպվել և վերահսկվել են ադրբեջանական իշխանությունների կողմից [12]:

5. Գրինի հաշվետվության նկատմամբ կիրառելով Գ. Սթենթոնի ցեղասպանության փուլերի սանդղակը [4], բացահայտում ենք դրանցից առաջին չորսի առկայությունը համիդյան ջարդերի շրջանում.

1. *Պատկերագրում*. (թուրքերը և հայերը) - բազմաթիվ աղբյուրներ վկայում են, որ թուրքերը իրենց առանձնացնում էին իբրև իշխող ազգ, իսկ ոչ մուսուլմանները ընկալվում էին իբրև ցածրակարգ: Հասարակությունը կայուն երկշերտ էր.

2. *Կիսակալորում* (մուսուլման մեծամասնություն և քրիստոնյա փոքրամասնություն) - Շարիաթի կանոնների համաձայն՝ իրավական տեսակետից ի սկզբանե որոշակիացվել է մուսուլմանների և ոչ մուսուլմանների կարգավիճակը, ընդ որում՝ մուսուլմանները ոչ մուսուլմաններին կոչում էին *նայա*՝ անասուն.

3. *խտրականություն*. գերիշխող խումբը օրենքների, սովորույթների և քաղաքական ուժի կիրառմամբ իշխանություն չունեցող խմբին գրկում է իր քաղաքացիական իրավունքներից, ոտնահարվում են քաղաքացու իրավունքները՝ ազգային, էթնիկական, կրոնական, ռասսայական խտրականության պատճառով. թուրքի հպատակության տակ Արևմտյան Հայաստանում ապրող հայը գրկված էր բոլոր իրավունքներից: Կրոնական պատկանելությունը դառնում է տարբերակիչ սոցիալական կարգավիճակի մաս և հաճախ նպաստում է հասարակության բազմաշերտ կառուցվածքում այլ շերտերից օտարմանը (համիդյան ջարդերին նախորդող շրջան).

4. *մարդատյացություն*. երբ որոշակի կիսակալորմամբ դրսևորվում է արհամարհանք, ատելություն, ստորակարգում, անմարդկային ու զազանաբարո վերաբերմունք թե՛ բառացի վիրավորանքների, ստորացումների (ցավուր, թշնամի) և թե՛ ֆիզիկական խոշտանգումների կիրառմամբ (Համիդյան ջարդերի շրջան).

6. Գրինի հաշվետվության մեջ լուսաբանվող վերոբերյալ չորս փուլերին Բաքաթընների հաշվետվության շրջանակներում ավելանում է ևս չորս փուլերի նկարագրություն.

5. *կազմակերպում*. ցանկացած ցեղասպանություն հիմնականում կազմակերպվում է պետության կողմից, և թուրքերը հայերի ցեղասպանությունը հետագայում կոչեցին դեմոգրաֆիկ ինժեներիա, որն իրականացվել է կառավարության նախապես մշակված պլանով, որի համաձայն տեղի է ունենում հասարակության բաժանում հակադիր ուժերի և իրականացվում են ժամանակատար նախապատրաստություններ.

6. *բևեռացում*. հասարակությունը բաժանվում է հակադիր ուժերի, այլևս հնարավոր չէ բանակցությունների միջոցով շտկել իրավիճակը, տեղի են ունենում մասսայական ջարդեր, որոնք սկսվում են թիրախ հանրության մտավորականների ու նրանց ընտանիքների սպանություններով.

7. *նախապատրաստությունների* փուլում կազմվում են զոհերի ցուցակներ՝ ըստ ազգային ինքնության. իրականացնող կողմը հայտարարում է՝ եթե մենք չսպանենք նրանց, նրանք մեզ կսպանեն.

8. *հետապնդումների* փուլում ճշտվում է զոհերի ինքնությունը, և հետապնդվող ազգային, կրոնական, էթնիկական խմբերը բռնի տեղահանվում են, առանձնացվում են որոշակի վայրերում և ճամբարներում, որտեղ չկան կյանքի համար տարրական պայմաններ՝ ջուր, սնունդ: Նման պայմաններում տարածվում են կյանքի հետ անհամատեղելի հիվանդություններ: Ըստ էության տարհանված բնակչությունը դատապարտվում էր մահվան:

#### **Memoir-Accounts Of Foreigners As Valuable Sources In The study Of Armenian Genocide History N. Gasparyan, A. Darbinyan**

**Abstract.** The article discusses urgent problems dealing with Armenian linguo-culture and national issues. Memoir-accounts written for the British Government are investigated as valuable sources in the study of Armenian Genocide history. The authors were expected to present valid and impartial details on Armenia and Armenians without distorting the facts. The textological analysis of foreign missionaries' speeches is carried out from the linguo-cognitive perspective with the account of the ex tra-linguistic reality. The method of careful sampling of examples is applied.

**Keywords:** *Memoir-accounts, sources, Armenian, Turkish massacres, genocide.*